
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐԳԻՆԵ ԴՎԹՅԱՆ

ՀՀ ժողովրդավարացման և ազգային անվտանգության տեսանկյունից կասկածից վեր է ՁԼՄ-ների գործառնական բարձր կենսունակությունը: Ընդ որում, խոսքն այստեղ ոչ միայն հայաստանյան ՁԼՄ-ների մասին է, այլև արտերկրի: Սա բացատրվում է այն իրողությամբ, որ մերօրյա աշխարհում այս կամ այն պետության շահերի ապահովման, ազգային անվտանգության պահպանման գործում կարևոր է նաև միջազգային հանրության աջակցության, գերտերությունների համապատասխան վերաբերմունքի գործոնը: Այսօր յուրաքանչյուր պետություն, այդ թվում՝ գերագործերը, կարիք ունեն անվտանգության համապատասխան միջոցառումների ձեռնարկման, որոնք կկանխեն տեղեկատվական միջավայրի վրա բացասական ներգործության գործառույթ իրականացնող ներքին և արտաքին տարաբնույթ սպառնալիքները: Ասվածն առանձնահատուկ հնչեղություն ունի նաև ՀՀ պարագայում, որն այսօր կանգնած է արցախյան հակամարտության լուծման, ինչպես նաև արդյունավետ ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու հրամայականների առջև, իսկ ռազմատենչ հարևանի (Ադրբեյջանի Հանրապետության) խնդիրը ոչ միայն միջազգային մակարդակով ՀՀ-ին վարկաբեկել է, այլև նրան «ապագայագրկելը»: Այս առումով պատահական չէ, որ վերջին ժամանակներում նաև մեզանում նկատվում է տեղեկատվական անվտանգության հիմնահարցի հանդեպ տեսական հետաքրքրությունների աճ, որը պայմանավորված է ոչ միայն որոշակի հետազոտական բացը լրացնելու, այլև կոնկրետ գործնական խնդիրների առնչությամբ լուծման տարբերակներ մշակելու հրամայականով:

Անցումային փուլում գտնվող ՀՀ-ում լրատվական ոլորտում եղած բացթողումներն ունեն ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ դրսևորումներ: Այդ պատճառով էլ նշված ոլորտի խնդիրները պայմանավորված են «մարդածին» գործոններով: ՀՀ-ում հասարակական-քաղաքական կարծիքի մանիպուլյացիայի, ապատեղեկատվության, ՁԼՄ-ների անազատության պատասխանատուների շարքում պետք է տեսնել ինչպես պետական ապարատը, իշխանության ներկայացուցիչներին, այնպես էլ տարաբնույթ ՁԼՄ-ները, դրանց աշխատակիցներին, որոնք, այս կամ այն պատճառով «խուսափելով» արհեստավարժ լրագրության բարոյական վարքականոններ ստեղծելու կամ դրանցով առաջնորդվելու հրամայականից, երբեմն պատճառ են դառնում օբյեկտիվ և անաչառ տեղեկատվության «անհասանելիության»: Նրանց գործունեության ընթացքում որևէ խնդրի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորումն իրականացվում է ոչ հավաստի, կողմնակալ, հուզական տեղեկատվության «ներարկմամբ», ինչը, հասկանալի է, կարող է ունենալ նաև աղետալի հետևանքներ: Անպայման չէ, որ ոչ հավաստի տեղեկատվության հանրայնացումը լինի դիտավորության

հետևանք, սակայն դա բնավ չի մեղմում մարդկանց՝ իրազեկ դառնալու իրավունքի խախտման հանգամանքը: «Վերջերս, - գրում է Խ. Դադայանը, - Ադրբեջանում կազմվել է շորթմամբ զբաղվող 36 լրատվամիջոցների ցանկ, սակայն նույն արատն առկա է նաև Հայաստանում: Դրամաշորթությունը, պատվերով հողվածներն ու հաղորդումները, մատուցած «ծառայության» դիմաց «պատասխան» պահանջելու պրակտիկան զգալիորեն տարածված են: Երբ մասնավոր, «անկախ» կամ կուսակցական ՁԼՄ-ներն են նման գործելակերպ որդեգրում, դա նախ բարոյականության խնդիր է: Բայց երբ նույնը իրագործում են պետական լրատվամիջոցների ներկայացուցիչները, անթույլատրելի, ուղղակի հարված է պետության, իշխանության հեղինակությանը»¹: Համաձայնելով Խ. Դադայանի տեսակետին՝ այնուամենայնիվ պետք է մի վերապահում անենք: Մասնավոր, կուսակցական և այլ ՁԼՄ-ների պատվերով հողվածները, դրամաշորթությունը սոսկ բարոյականության խնդիրներ չեն. դրանք լուրջ հարված են պետության հեղինակությանը, պետության անվտանգությանը: Եվ սա այն դեպքում, երբ տեղեկատվական առումով ՀՀ-ն բավականին խոցելի վիճակում է:

Նկատի առնելով այն, որ տեղեկատվական անվտանգությանը սպառնացող երևույթները կարող են լինել տեղեկատվածին (ինֆոզեն) և ոչ տեղեկատվածին, կարելի է պատերազմները կոչել տեղեկատվական, երբ դրանց թիրախի կարգավիճակում հակառակորդի տեղեկատվական միջավայրն է՝ տեղեկատվական ռեսուրսները և տեղեկատվածին գործառույթներ իրականացնելու ներուժ ունեցող կառույցներն ու համակարգերը, որոնց վնասագերծումը կարող է իրականացվել տեղեկատվական և ոչ տեղեկատվական միջոցներով: Իրենց հերթին տեղեկատվածին և ոչ տեղեկատվածին սպառնալիքները կարելի է բաժանել ներքինի և արտաքինի: Որպես արտաքին տեղեկատվածին սպառնալիքների աղբյուր՝ Գ. Հարությունյանը առանձնացրել է մի շարք գործոններ²:

1. *Տվյալ պետության ռազմավարական-մարտավարական մրցակից կամ հակառակորդ երկրները կամ կազմակերպությունները, որոնք կարող են իրականացնել պետության միջազգային հեղինակությունը վարկաբեկող քարոզարշավներ: Իսկ դրանց նկատմամբ համակարգված հակաքարոզչություն իրականացնելու անկարողությունը, ինչպես գիտենք, պետության զարգացման հեռանկարը խիստ կվտանգի: Օրինակ՝ արցախյան հիմնահարցի առնչությամբ Ադրբեջանի քարոզչական մեքենան կազմակերպված և համակարգված աշխատանքի շնորհիվ փորձում է ոչ միայն նենգափոխել պատմական և մերօրյա փաստերը, այլև միջազգային հանրությանը ներկայանալ ազնիվ և մարդասեր հանրույթ-«զոհի» կարգավիճակով, որի դժբախտությունների հեղինակն «ազրեսոր» հայերն են կամ Հայաստանի Հանրապետությունը: Իրողություն, որը հակաքայլեր մշակելու հրամայական է ներկայացնում ինչպես մեր իշխանություններին, այնպես էլ տարաբնույթ կազմակերպություններին:*

2. *Տվյալ պետության շահերն անտեսող և սեփական շահերով առաջնորդվող երկրներն ու կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել թիրախ պետության քաղաքական և տնտեսական «գործընկերները»,*

¹ Դադայան Խ., Պետական լրատվամիջոցները ՀՀ տեղեկատվական անվտանգության համատեքստում (նախնական դիտարկում), 2009, <http://noravank.am>

² Տե՛ս Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, 2007, <http://www.noravank.am>

տարաբնույթ կրոնական ու ոչ կրոնական կազմակերպությունները և այլն: Օրինակ՝ ՀՀ պարագայում իրական վտանգ է պարունակում և կարող է ներկայացնել «նայր» կազմակերպության արբանյակ «Եհովայի վկաների» հայաստանյան կառույցի գործունեությունը, որը թեպետ ունի պաշտոնական գրանցում, այնուամենայնիվ առաջնորդվում է բացառապես սեփական շահերի բավարարման սկզբունքով: Հարկ է նշել, որ բացառապես սեփական շահերով առաջնորդվող կազմակերպություններն ազգային անվտանգության դեմ պայքարը կարող են հաղթական ավարտի հասցնել տարբեր կերպ: Օրինակ՝ օտարերկրյա հատուկ ծառայությունների, հանցագործ խմբավորումների, ինտերնետային հակերների ներթափանցումը պետական ու մասնավոր տեղեկատվական ցանցեր և, ըստ այդմ, ազգային տեղեկատվական ռեսուրսների վտանգումը, պետական գաղտնիք հանդիսացող տնտեսական, ռազմական և այլաբնույթ տեղեկատվության գաղտնագերծումը խոցելի են դարձնում պետությունը: Այս առումով տեղին է հիշել նաև վերջերս ադրբեջանական կողմի նախադեպը չունեցող հարձակումը հայկական կայքէջերի վրա, որը նկատելի վնաս հասցրեց պետական և հասարակական կառույցներին:

3. Տեղեկատվական դաշտում առկա և անգիտակցաբար տվյալ պետության դեմ ուղղված քառսային տեղեկատվական հոսքերը, որոնք բացասաբար են ներգործում գիտակցության վրա:

Արցախյան հակամարտության և ՀՀ ազգային անվտանգության առնչությամբ պետք է նշել, որ ադրբեջանական քարոզչական մեքենան արտաքին ճակատում տեղեկատվական հաղթանակներ տոնելու իմաստով առավել կենսունակ է, քան հայկական կողմը: Իսկ այս ամենը ստիպում է մտածել ոչ միայն տեղեկատվական պաշտպանության, այլև տեղեկատվական հարձակման մասին, քանի որ «տեղեկատվական անվտանգությունը կարելի է մեկնաբանել որպես տեղեկատվական պայքարի և պաշտպանության մեթոդների կապակցում, որոնք տեղեկատվական անվտանգության բաղկացուցիչներն են»³: Ըստ Պոչեպցովի՝ տեղեկատվական պաշտպանությունը կարող է կառուցվել համաչափ և ոչ համաչափ պատասխանի մոդելով⁴: Օրինակ, եթե տեղեկատվական հարձակման սուբյեկտը սեփական թեզի պաշտպանության ժամանակ վկայակոչում է որևէ հեղինակության, ապա տեղեկատվական պաշտպանության սուբյեկտի՝ մեկ այլ հեղինակության տեսակետի վկայակոչումը կլինի համաչափ պատասխանի դրսևորում: Հայաստանյան ներքաղաքական կյանքում համաչափության վառ արտահայտություններից կարելի է համարել տարբեր տարիների նախագահական ընտրությունների ժամանակ իշխանության կազմակերպած հանրահավաքները՝ ի պատասխան ընդդիմության նախաձեռնած բազմահազարանոց հանրահավաքների: Տվյալ պարագայում կարևոր չէ, թե հանրահավաքներն իրողություն են դառնում մասնակիցների համոզմունքների, թե համապատասխան պարտադրանքների շնորհիվ: Ինչ վերաբերում է ոչ համաչափ պատասխաններին, ապա խնդիրը քննարկելով արցախյան հակամարտության համատեքստում, կարող ենք նշել հետևյալ օրինակը. ադրբեջանական կողմն Արցախի նկատմամբ իր ավակնություններն արդարացնելու համար բերում է մտացածին կամ ար-

³ **Почепцов Г.** Информационно-политические технологии. М., 2003, с. 337.

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 337-338:

հետաժողովին փաստարկներ Արցախի՝ ադրբեջանապատկան բազմադարյան պատմությունից: Մինչդեռ հայկական կողմը կարող է ներկայացնել ոչ միայն պատմական փաստեր, Արցախի հայապատկան պատմության մասին հիմնավորումներ, այլև իրավական փաստաթղթեր՝ կոչված ապացուցելու Արցախի ադրբեջանապատկան չլինելու փաստը: Այսօրինակ պատասխանը կարելի է դիտարկել որպես *անհամաչափ*:

Արդեն ակնարկել ենք, որ ադրբեջանական կողմը գտնվում է որոշակիորեն շահեկան վիճակում՝ ցույց տալով առավել մեծ կենսունակություն և հետևողականություն տեղեկատվական պատերազմ իրականացնելու առումով: Եթե նկատի առնենք նաև այն, որ հայկական կողմը հիմնականում սահմանափակվում է ադրբեջանական ծագում ունեցող այս կամ այն տեղեկատվության հերքմամբ, ինչը հակառակորդի տեղեկատվական «զինանոցի» չնչին մասն է կազմում, ապա հասկանալի է դառնում, որ տեղեկատվական տեսանկյունից ՀՀ պարտությունը առավել քան հավանական կարող է լինել, իսկ իրավիճակը՝ առավել քան մտահոգիչ: Ավելին, ադրբեջանական կողմի ծավալած գործողությունները ոչ միայն լավ մշակված են, ծրագրավորված, այլև աչքի են ընկնում «երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների» հայեցակարգին հարիր բնութագրական գծերով⁵: Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների օգնությամբ լուծվող խնդիրների շարքում հաճախ առանձնացվում են հետևյալները.

1. հասարակական գիտակցության և երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման մանիպուլյացիա՝ լարվածություն և քառս տեղծելու նպատակով,

2. կուսակցությունների, միավորումների և շարժումների միջև քաղաքական պայքարի գերլարում՝ բախումներ հրահրելու, անվստահություն և կասկածանտություն բորբոքելու նպատակով. ընդդիմության հանդեպ ճնշումների սադրում, փոխոչնչացման դրդում,

3. իշխանական մարմինների տեղեկատվական ապահովման մակարդակի նվազեցում, ոչ շահավետ վարչական որոշումների մղում,

4. պետական մարմինների աշխատանքի մասին բնակչությանը ապատեղեկատվության տրամադրում, կառավարման մարմինների վարկաբեկում,

5. պետության միջազգային հեղինակագրկում, այլ երկրների հետ համագործակցության խափանում և այլն⁶:

Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմի հայեցակարգային դրսևորումների ու տեխնոլոգիական զինանոցի կիրառությունները կարող են վերաբերել տարբեր քաղաքական ուժերի, խմբերի ու միավորումների, սպասարկել նրանց շահերը:

Արցախյան հիմնահարցում ադրբեջանական կողմի հակահայկական գործողությունները երկբևեռ են: Առաջինը, պայմանականորեն ասած, ուղղված է արտաքին, իսկ երկրորդը՝ ներքին լսարանին: Ընդ որում, արտաքին լսարանը, ընդհանուր առմամբ, կարելի է համարել երկճակատ՝ հայաստանյան (արցախյան) և արտահայաստանյան: Եթե հայաստանյան լսարանին ուղղված գործողությունների նպատակը հիմնականում հոգեբանորեն ներազդելն ու ներքին երկպառակություններ հրահրելն է (*օրի-*

⁵ Տե՛ս **Տեր-Չարությունյան Գ.**, Տեղեկատվական պատերազմները և ԼՂՀ-ն (2009), <http://noravank.am>

⁶ Տե՛ս նույն տեղը:

նակ, Ադրբեջանի օրեցօր հզորացման գաղափարը որոշակի խնդիրներ ունեցող ՀՀ ազգաբնակչության մեջ որպես թերաբժեքություն, պարտվողական հոգեբանություն սերմանելու միջոց և այլն), ապա արտաքին լսարանին նպատակաուղղված գործողությունները հիմնականում կոչված են միջազգային հանրության շրջանում Ադրբեջանի՝ դրական իմիջ ձևավորելուն, Հայաստանի՝ որպես զավթող պետության մասին կարծիքն արմատավորելուն: Օրինակ, վերջին ամիսների ընթացքում ադրբեջանական ՁԼՄ-ներում տեղ գտած գրեթե ամենօրյա հաղորդագրություններն այն մասին, թե հայկական կողմը շարունակ խախտում է զինադադարը, ըստ էության, միջազգային հանրությանը որոշակի կարծրատիպի ձևավորման հնարավորություն է տալիս: Այս մասին է վկայում Եվրախորհրդի, Եվրամիության, ԵԱՀԿ, ինչպես նաև ԱՄՆ բարձրաստիճան ղեկավարության մտահոգությունը զինադադարի խախտման հաճախականության առիթով, որը ակնհայտ ոչ հայանպաստ է: Իսկ Հայաստանը զինադադարի խախտման վերաբերյալ հայտարարություն է ներկայացնում եռամսյակը մեկ⁷:

Հայ-ադրբեջանական հակամարտության տեղեկատվության վերաբերյալ ուշագրավ վերլուծական է ներկայացրել Ս. Մովսիսյանը, որը փորձել է վեր հանել այն հիմնական տեղեկատվական գործողությունները, որոնք ադրբեջանական կողմը, մամուլը հետևողականորեն կիրառում է՝ արտաքին և ներքին լսարաններում համապատասխան նպատակների հասնելու համար: Որպես այդպիսիք Ս. Մովսիսյանն առանձնացնում է հետևյալները՝

- 1) առաջնայնության գործոն,
- 2) փոխհղումային և անանում հղումային համակարգ,
- 3) միջնորդներ կամ հայտնի մասնագետներ,
- 4) հասկացությունների աղավաղում և դասակարգում,
- 5) փաստերի շարադրանք,
- 6) հետադարձ կապ,
- 7) պատմության վերագրառում⁸:

Վերը նշված տեղեկատվական գործողությունների մանրամասն պարզաբանման խնդիր չունենալով՝ այնուամենայնիվ նշենք, որ դրանք աչքի են ընկնում ապատեղեկատվության տարաբնույթ դրսևորումներով: Առհասարակ, ադրբեջանական կողմի ապատեղեկատվական ներուժը երբեմն զավեշտի է վերածվում: Այսպես, օրինակ, «Բանկ տեղեկատվություն» կենտրոնի ղեկավար Նովրուզօղլուն «հայտնագործել» է հայ գրող, հրապարակախոս Ջորի Բալայանի «Հարություն» գիրքը, որի 260-րդ էջում հայ հեղինակը իբր ներկայացնում է հայ զինվորականների՝ ադրբեջանցիներին խոշտանգելու մանրամասներ: Իսկ “Зеркало”-ի 2006 թ. հունիսի 2-ի համարում Նովրուզօղլուն նշում է նաև գրքի տպագրության տարեթիվը՝ 1996, և հրատարակչությունը՝ «Վանաձոր»: Այնինչ՝ գրողը այդպիսի վերնագրով գիրք ընդհանրապես չունի, իսկ հրատարակչությունը անհայտ է⁹:

Ադրբեջանական ապատեղեկատվական ներուժը, ցավոք, վերը նշվածով չի սահմանափակվում, և մեր հարևանների ապատեղեկատվական գործողությունների նպատակը ոչ միայն Հայաստանի միջազգային հեղինա-

⁷ Տե՛ս **Մովսիսյան Ս.**, Ադրբեջանի ՁԼՄ-ների կողմից կիրառվող տեղեկատվական գործողությունների տեխնոլոգիաները (2009), <http://noravank.am>

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս **Նահապետյան Հ.**, Ադրբեջանում ապատեղեկատվության ուղղությամբ նպատակային աշխատանքի ծավալման վերաբերյալ (2009), <http://noravank.am>

կազրկումն է, այլև Ադրբեջանում հակահայկական տրամադրությունների ուժեղացումը, ներքին միասնականության ապահովումը: Յցուն է Ռամիլ Սաֆարով մարդասպանի «ազգանվեր» կերպարի օգտագործման փաստը և այլն¹⁰: Բացի այդ, քիչ չեն այն դեպքերը, երբ հարևաններն օգտագործում են նաև առավել քողարկված մեթոդներ, մասնավորապես՝ հայկական դրոշի ներքո ստեղծում են ինտերնետային կեղծ ռեսուրսներ, որոնք իրականում հսկում են իրենք՝ ադրբեջանցիները: Այդպիսին է, այսպես կոչված, «խրոնիկա» տեղեկատվական պորտալը (www.xronika.com)¹¹: Իսկ այդպիսի կայքէջերը կարող են նպաստել ՀՀ-ում հասարակական կարծիքի խեղաթյուրումներին, այն իրենց ցանկալի հունով ուղղորդելուն:

Տեղեկատվական պաշտպանությունը, ինչպես արդեն նշել ենք, երբեմն պետք է իրականացնել տեղեկատվական հակահարձակման պաշտպանական գործառույթի գիտակցման դիրքերից, ինչը նշանակում է այնպիսի գործողությունների համալիր ծրագրի մշակում, որը հնարավորություն կտա հարաբերականորեն անվտանգ պահել սեփական տեղեկատվական միջավայրը և խոցելի դարձնել հակառակորդին: Համալիր ծրագիրը պետք է ունենա իր ոլորտային բաղադրիչները՝ տնտեսական (ՀՀ շահերի տեսանկյունից ներկայացնել Ադրբեջանի տնտեսական խնդիրները), քաղաքական (մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական զարգացումների տեսանկյունից ապացուցել Ադրբեջանի խոցելի լինելը և այլն), սոցիալական, գիտամշակութային (ներկայացնել Ադրբեջանի ապամշակութային ներկան, քարոզչական աշխատանքներ կատարել մեր գիտամշակութային անցյալն ու ներկան ճանաչելի դարձնելու համար և այլն), բնապահպանական (քարոզչական առումով հնարավորինս բացասական ներկայացնել բնապահպանական իրավիճակն Ադրբեջանում), ռազմական և ռազմաարդյունաբերական (փոխել Ադրբեջանի հասարակության կարծիքը Ադրբեջանի ռազմական հզորության վերաբերյալ և այլն)¹²: Ոլորտային նշված ուղղություններով տեղեկատվական հակահարձակման համապատասխան ծրագրերի և ռազմավարության մշակումը հնարավորություն կտա խոցելի իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետությանը երկվեկտոր ներգործություն ունենալ Ադրբեջանի վրա: Այս դեպքում Ադրբեջանը մի կողմից ստիպված կլինի լրացուցիչ ռեսուրսներ ծախսել՝ լուրջ աշխատանքներ իրականացնելով ներքին խնդիրների լուծման համար, իսկ մյուս կողմից՝ միջազգային ասպարեզում ցանկալի իմիջի ձևավորման համար:

ՀՀ անվտանգության առջև առկա մարտահրավերները չեն սահմանափակվում վերոգրյալով, քանի որ գոյություն ունեն նաև ներքին սպառնալիքներ, որոնց շարքում կարելի է առանձնացնել հետևյալները:

1. Կան կազմակերպություններ, անհատներ, խմբեր և հաստատություններ, որոնք հիմնվում են ներքին մասնավոր կամ պետական ռեսուրսների վրա և օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով գործում են ազգային կամ պետական շահերին ոչ համահունչ: Օբյեկտիվ այն առումով,

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս **Մարտիրոսյան Ս.**, Ադրբեջանը թեժացնում է տեղեկատվական պատերազմը (2009), <http://noravank.am>

¹² Տե՛ս **Մարտիրոսյան Ս.**, ՀՀ տեղեկատվական հակազդեցության հիմնական ուղղությունները, 2009, <http://noravank.am>

որ այդ շահերը կարող են լինել չհստակեցված¹³, իսկ սուբյեկտիվ այն պատճառով, որ հստակեցված ազգային, պետական շահը կարող է ստորադասվել տարաբնույթ՝ անձնական, կլանային և այլատիպ, շահերի: Օրինակ՝ ստվերում գործող տնտեսական այս կամ այն կառույցը պետությանը վնասում է ոչ միայն համապատասխան հարկային մուտքերը նվազեցնելու կամ օրենքը շրջանցելու ճանապարհով, այլև կարող է նպաստել ոչ օբյեկտիվ վիճակագրական տեղեկատվության ստացմանը, ինչը կարող է կասկածահարույց դարձնել տարբեր ոլորտներում համապատասխան ծրագրային քաղաքականության իրականացման արդյունավետությունը: Բացի այդ, ՁԼՄ-ների կենսագործունեության համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք հայթայթելու նպատակով ՁԼՄ-ները պատրաստ են համագործակցային «հնազանդության»՝ ստանձնել պարտավորություններ երևույթները լուսաբանելու և մեկնաբանելու ֆինանսավորողին բարեհաճ տարբերակով: Իսկ սա, հասկանալի է, ազգային անվտանգությանը լուրջ հարված կարող է հասցնել, քանզի շահերը ոչ միշտ է, որ համընկնում են, առավել ևս՝ մասնավոր և ազգային շահերը:

2. Տեխնիկական այն համակարգերը, որոնք իրենց «մաշվածության» և ժամանակի պահանջներին չբավարարող ներուժի պատճառով կարող են չապահովել զարգացման անհրաժեշտ տեմպեր: Ոչ բարեկամ «հարևաններ» ունեցող պետությունների պարագայում սա կարող է լուրջ սպառնալիք լինել ազգային անվտանգությանը: Տեղեկատվական ոլորտում երկրի հետամնացության աստիճանը, ինչը էներգետիկայի, արտադրական գործունեության, գիտության և արդիական կրթության զարգացման իրական խոչընդոտ է, առաջացնում է ուժերի անհավասարություն, այդ իսկ պատճառով զարգացած երկրները վերահսկողություն են սահմանում զարգացող կամ «երրորդ աշխարհի» երկրների վրա: Ուստի տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումն ու արդիականացումը անհրաժեշտ են զարգացման և անվտանգության երաշխիքներ արձանագրելու համար:

3. Անհրաժեշտ տեղեկատվական քաղաքականության բացակայությունը կամ դրա ոչ արդյունավետությունը, ինչը հնարավորություն է տալիս ժողովրդի ապատեղեկացման նպատակաուղղված ներքին և արտաքին քարոզչության իրականացմանը:

4. Հոգևոր, մշակութային միասնական տարածքի քայքայումը, արժեքային վակուումի առաջացումը, տարաբնույթ կրոնական կազմակերպությունների ակտիվացումը, որոնք մեծապես վտանգում են հասարակական համերաշխությունը, հասարակության հոգևոր կյանքի «բնականոն» ընթացքը: Տեղեկատվական հոսքերի ակտիվացումն ու տարբեր կրոնական աղանդների և քրեածին խմբերի երևան գալը նոր հնարավորություններ են ընձեռում սեփական գաղափարների տարածման համար: Այս առումով տեղին է վկայակոչել հոգևոր, քաղաքական կյանքին առնչվող մի օրինակ. հայտնի է, որ ԽՍՀՄ-ում պաշտոնական գաղափարախոսությունը աթեիստական էր. խորհրդային հասարակության **անաստվածացումը** նպաստեց կրոնական վակուումի ձևավորմանը, ինչը ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածաշրջանի երկրների և մասնավորապես ՀՀ հոգևոր կյանքում լրացվեց քառասյին բազմազանությամբ և երբեմն մարդատյա-

¹³ Տե՛ս **Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., <http://www.noravank.am>

ցությանը ու պետականամերժությանը աչքի ընկնող տարաբնույթ կրոնական աղանդների «արժեքներով»: Այս առումով տեղին է վկայակոչել «Եհովայի վկաներ» աղանդի գործունեությունը, որն հրական սպառնալիք է ՀՀ ազգային անվտանգությանը: Բնավ չմերժելով խղճի ազատության իրավունքի կարևորությունը, այնուամենայնիվ պատերազմական վիճակում գտնվող ՀՀ պարագայում դժվար թե կասկածահարույց լինի այն, որ պարտադիր զինծառայությունից խուսափելու եհովայական «խաղաղասիրական» հորդորներն ինչպիսի աղետալի հետևանքներ կարող են ունենալ ՀՀ համար:

Այսպիսով, ՀՀ ազգային անվտանգության հարցն ունի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բաղադրիչներ: Ներքին առումով ՀՀ անվտանգության գործում զգալի է ՋԼՄ-ների գործառնական կենսունակությունը, քանի որ նրանք են հիմնական այն կառույցները, որոնց միջոցով տեղի է ունենում ընտրազանգվածի քաղաքական կողմնորոշումների կամ հասարակական-քաղաքական կարծիքի ձևավորումը: Եվ եթե ՋԼՄ-ները չեն առաջնորդվում պատասխանատու ազատության սկզբունքով, ապա մեծ է վտանգը, որ խոսքի ազատության կարգախոսի ներքո տարաբնույթ քաղաքական ուժեր կամ օտարածին ուժային կենտրոններ կարող են Հայաստանում ապահովել իրենց պետական կամ ազգային շահերը՝ ի վնաս հայոց պետականության:

АРГИНЕ ДАВТЯН – Политические конфликты и СМИ в Республике Армения. – В статье в контексте современных реалий анализируются теоретически и практически значимые актуальные проблемы, в частности, проблемы информационной безопасности, связанные с политическими конфликтами и СМИ в Армении. Хотя в демократических и тоталитарных государствах концепции информационной безопасности существенно разнятся, общим для них, в том числе и для Армении, является взгляд на проблему (в данном случае на Карабахский конфликт) через призму инфогенных и неинфогенных, внутренних и внешних угроз. Поскольку СМИ в Армении выступают основной структурой, посредством которой формируется общественное мнение, ясно, сколь важна их роль для национальной безопасности. Ибо если они не будут руководствоваться ответственностью, то велика угроза, что те или иные политические силы, включая враждебно настроенные, смогут обеспечить в стране свои антинациональные и антигосударственные интересы в ущерб армянской государственности.

Кроме того, в статье обосновывается мысль, что информационные войны являются таковыми не потому, что в них используется информационный инструментарий, а потому, что они ведутся в некоторой информационной среде.

ARGINE DAVTYAN – Political challenges and mass media in the Republic of Armenia. – The paper considers theoretically and practically actual problems of information security, related to political conflicts and mass media in the contemporary context.

Though democratic and totalitarian states have various concepts of information security, they share the same view of the problem (in this case the Karabakh issue)

through the prism of risks that are related and unrelated to information, as well as internal and external threats.

Given the fact that mass media in Armenia presents the main structure by which public opinion is formed, it is obvious how significant its part is in the national security. Should mass media lack responsibility, there is a risk that some political forces, including hostile ones, may lay out their anti-national and anti-state plans in the country.

The paper also argues that information wars owe their name not to the fact that they employ information tools but the truth that they are conducted in the information environment.